ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ 1960—1961 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԵԾՐՋԱՆԻ ՀԱՄԱՐ

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարանը գիշերօթիկ դպրոց է վեց դասարաններով—երեքը՝ դասարանական, երեքը՝ լսարանական: Նրա նպատակն է պատրաստել զարգացած և ազգանվեր հոգևորականներ: Ճեմարանը տալիս է բարձրագույն հոգևոր կրթություն: Ուսանողներին ձրիաբար տրամադրվում են հանրակացարան բոլոր հարմարություններով, հանդերձեղեն, սնունդ, գրենական պիտույքներ և այլն:

Ս. Էջմիածնի Հոգևոր ճեմարան կարող են ընդունվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու զավակ եղող 18-ից 25 տարեկան ամուրի անձինք, որոնք չեն պատկանում որևէ կուսակցության, զերծ են ֆիզիկական թերությունից և հիվանդությունից, չեն դատված և ունեն առնվազն 7-ամյա կրթություն:

Դիմողները քննություն պիտի հանձնեն հայոց լեզվից ու գրականությունից, հայ ժողովրդի պատմությունից և երգեցողությունից: Բարձր կրթություն ունեցող թեկնածուները կտեղավորվեն համապատասխան դասարաններում:

Դիմողները պիտի ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.

1. Ինքնագիր դիմում այն մասին, որ իրենք ճեմարանն ավարտելուց հետո ցանկություն ունեն հոգևորական դառնալու:
2. Բարի վարուց վկայական՝ ստորագրված եկեղեցական իշխանության կողմից:
3. Բժշկական վկայական՝ առողջության մասին:
4. Ծննդյան և մկրտության վկայական:
5. Կրթության վկայական կամ համապատասխան տեղեկանք:
6. Երեք լուսանկար (լուսանկարված դիմումի օրերին):

Արտասահմանյան երկրների թեկնածուները պետք է իրենց դիմումն ու հարակից փաստաթղթերը ներկայացնեն իրենց թեմի հոգևորական առաջնորդներին ոչ ուշ քան սույն թվականի օգոստոսի 1-ը:

ՀԱՅԿԱԶՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

(Վերատեսուչ Հոգևոր ճեմարանի)